«Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2010 թվականի մարտի 18-ի N 113-Ն հրամանի մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կրթության և գիտության նախարարի հրամանի նախագիծ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ

2010 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 18-Ի N 113-Ն ՀՐԱՄԱՆԻ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածով.

Հրամայում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2010 թվականի մարտի 18-ի «Հայաստանի Հանրապետության «Պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի ձևավորման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2006 թվականի դեկտեմբերի 8-ի N 981-Ն հրամանը ուժը կորցրած ճանաչելու մասին» N 113-Ն հրամանի հավելվածի (այսուհետ՝ Հավելված) 1-ին կետում «Հաստատություն» բառը փոխարինել «Հաստատության» բառով:
2. Հավելվածի 2-րդ կետն ուժը կորցրած ճանաչել:
3. Հավելվածի 4-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4. Խորհրդի կազմը ձևավորվում է 9 անդամից՝ 3 տարի ժամկետով, որոնց առաջադրում են (այսուհետ՝ առաջադրող մարմին).

1) Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարությունը,

2) լիազորված մարմինը,

3) մանկավարժական խորհուրդը,

4) ծնողական խորհուրդը՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներին կից հանրակրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների։»:

4. Հավելվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 4.1-րդ և 4.2-րդ կետերով.

«4.1. Սույն կարգի 4-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերով սահմանված առաջադրող մարմինները չեն կարող դպրոցի խորհրդի կազմում առաջադրել նույն դպրոցի մանկավարժական աշխատողի։»:

4.2. Նույն անձը չի կարող ավելի քան երկու անգամ անընդմեջ ընտրվել (առաջադրվել) միևնույն Հաստատության խորհրդի անդամ։»:

5. Հավելվածի 6-րդ կետում «3» թիվը փոխարինել «2» թվով:
6. Հավելվածի 7-րդ կետում «3» թիվը փոխարինել «2» թվով:
7. Հավելվածի 8-րդ կետում «3» թիվը փոխարինել «2» թվով:
8. Հավելվածի 9-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հաստատության մանկավարժական խորհուրդը իր կազմից փակ քվեարկությամբ ընտրում է Խորհրդի 3 անդամ։»:

9. Հավելվածի 10-րդ կետն ուժը կորցրած ճանաչել:
10. Հավելվածի 11-րդ կետում «2» թիվը փոխարինել «3» թվով:
11. Հավելվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 13.1-րդ կետով.

«13.1. Սույն կարգի 4-րդ կետով սահմանված Խորհրդի լիազորությունների ժամկետը լրանալուց 10 աշխատանքային օր առաջ, խորհրդի անդամին առաջադրող մարմինը սույն կարգի պահանջներին համապատասխան առաջադրում է խորհրդի անդամի նոր թեկնածու։»:

12. Հավելվածի 15-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Օրենքով սահմանված դեպքերում՝ Խորհրդի անդամի լիազորությունների դադարեցման դեպքում նրան առաջադրող մարմինը 10 աշխատանքային օրվա ընթացքում առաջադրում է խորհրդի անդամի նոր թեկնածու՝ սույն կարգի պահանջներին համապատասխան։»:

13. Հավելվածի 17-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Լիազորված մարմինը, հիմք ընդունելով առաջադրող մարմնի կողմից ներկայացված խորհրդի անդամի թեկնածուի տվյալները, 3 աշխատանքային օրվա ընթացքում, ըստ ենթակայության՝ հաստատում է Խորհրդի անվանական կազմը կամ սույն կարգի պահանջների խախտման դեպքում՝ մերժում է Խորհրդի անվանական կազմում առաջարկված անձի թեկնածությունը: Օրենսդրությամբ նախատեսված դեպքերում՝ սույն կարգի 4-րդ կետով նախատեսված ժամկետից շուտ Խորհրդի անդամի լիազորությունները դադարեցվելու դեպքում՝ նոր խորհրդի անդամի լիազորություններն ավարտվում են խորհրդի լիազորությունների ժամկետի ավարտի հետ

միաժամանակ:»:

14. Հավելվածի 19-րդ կետի 1-ին ենթակետում «եռօրյա ժամկետում» բառերը փոխարինել «2 աշխատանքային օրվա ընթացքում» բառերով:
15. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը:
16. Ըստ ենթակայության լիազորված մարմիններին առաջարկել սույն հրամանի ուժի մեջ մտնելուց հետո երկամսյա ժամկետում սույն կարգին համապատասխան հաստատել Խորհուրդների նոր կազմերը: